ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41>>

ք.Երևան «10 » հունիսի 2019 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՋԻ ԷՆԴ ՋԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Զ. Մուրադյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո **և կատարման ժամկետը է սահմանվում՝ համաձայն Հավելված N 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **4089000 (չորս միլիոն ութսունինն հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը**:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	Կապալառու
Երևանի քաղաքապետարան	<<ՀԻ ԷՆԴ ՀԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Սևան, Նալբանդյան 44ա 5
Կենտրոնական գանձապետարան	«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 900052470508	Հ/Հ 2474602726090000
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 03622172
Է. Կիրակոսյան ----------	Զ. Մուրադյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<<10 > հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Հ. 95 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻՑ ԴԵՊԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ Հ 39 ՇԵՆՔ ՏԱՆՈՂ ԱՆՑՈՒՂՈՒ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4		
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Բետոնե աստիճանների քանդում	մ3	8.0000	12.8186	102.5488
2	Ջրահեռացման խողովակի ապամոնտաժում	գմ	4.0000	0.5860	2.3440
3	Բազրիքների ապամոնտաժում	գմ	4.0000	0.3553	1.4212
4	Շին աղբի և բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	16.0760	2.7612	44.3891
5	Խճի շերտի պատրաստում	մ3	5.4000	10.2243	55.2112
6	Միաձույլ ե/բետոնե աստիճանների պատրաստում B15 դասի բետոնից	մ3	11.0000	38.0201	418.2211
7	Ամրանի արժեքը Φ8 A500c դասի	տն	0.3470	363.4496	126.1170
8	Φ4 Bp-1	տն	0.1730	394.7529	68.2923
9	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ2	36.0000	13.5667	488.4012
10	Հենապատի լավորակ ց/ավազե սվաղ	մ2	15.0000	1.1027	16.5405
11	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ2	16.3000	1.0854	17.6920
12	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ2	16.3000	4.1111	67.0109
13	Բնահողի ետլիցք ձեռքով	մ3	9.0000	0.8440	7.5960
14	40x40x2մմ, 30x20x2մմ մետաղական խողովակներից բազրիքների տեղադրում	գմ	43.0000	1.8135	77.9805
15	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	86.0000	0.4498	38.6828
16	30x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	43.0000	0.7669	32.9767
17	Ներդիր թերթապողպատ 100x100x8մմ	տն	0.0226	627.2773	14.1815
18	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ2	107.5000	0.9048	97.2660
	Էլեկտրալուսավորություն				
19	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	1.2000	3.0787	3.6944

20	Բնահողի եռլիցք ձեռքով	մ3	0.5600	0.6908	0.3868
21	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	1.1840	2.7612	3.2693
22	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0.6400	42.8001	27.3921
23	133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.0204	72.7727	1.4822
24	133x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	1.6000	4.9963	7.9941
25	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	2.0000	11.2638	22.5276
26	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	13.6000	3.7797	51.4039
27	32x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	2.0000	0.8676	1.7352
28	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.1358	27.6908	3.7607
29	Լուսատու լուսադիոդային 1x85վտ	հատ	2.0000	22.2088	44.4176
30	ԱԲԲԳ 4x16մմ2 մալուխի անցկացում օդով ճոպանով	գմ	40.0000	1.0033	40.1320
31	ԱԲԲԳ 2x2.5մմ2 մալուխի անցկացում	գմ	10.0000	0.1886	1.8860
32	Ճոպանի արժեքը	գմ	40.0000	0.2413	9.6520
33	Մեկուսիչ ՏՖ-20	հատ	2.0000	0.4985	0.9970
34	Մեկուսիչ 'Ընկույզ'	հատ	2.0000	0.69812	1.3962
	Ընդամենը				1899.00000

Ծ Ա Վ Ա Լ Ա Թ Ե Ր Թ -Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ*

Հ. 93 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՐՏԱՔԻՆ ՄՈՒՏՔԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4		
	Շինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում	$մ^3$	1.8000	3.1500	5.6700
2	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	5.0000	2.9392	14.6960
3	Շին աղբի և բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	13.4600	2.7855	37.4928
4	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	2.3000	10.3145	23.7234

5	Միաձույլ ե/բետոնե աստիճանների պատրաստում B15 դասի բետոնից	մ³	2.2000	38.3554	84.3819
6	Ամրանի արժեքը Φ8 A500c դասի	տն	0.0670	366.6549	24.5659
7	Φ4 Вр-1	տն	0.0330	398.2343	13.1417
8	Աստիճանների և աստիճանատակերի երեսպատում 30մմ հաստությամբ բազալտե սալերով	մ²	15.5000	13.6863	212.1377
9	Խճի շերտի պատրաստում 12սմ հաստությամբ	մ²	26.0000	1.0950	28.4700
10	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 5սմ հաստությամբ	մ²	26.0000	4.1473	107.8298
11	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 15x30սմ	գմ	39.0000	4.9169	191.7591
	Մետաղական բազրիք 11.8մ				
12	40x40x2մմ, 30x20x2մմ մետաղական խողովակներից բազրիքների տեղադրում	գմ	11.8000	1.8295	21.5881
13	40x40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	23.6000	0.4537	10.7073
14	30x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	11.8000	0.7737	9.1297
15	Ներդիր թերթապողպատ 100x100x8մմ	տն	0.0050	632.8093	3.1792
16	Մետաղական մասերի 2շերտ ներկում	մ²	29.5000	0.9128	26.9276
	Էլեկտրալուսավորություն				
17	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	0.6000	3.1059	1.8635
18	Բնահողի ետլիցք ձեռքով	մ³	0.2800	0.6969	0.1951
19	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.5920	2.7855	1.6490
20	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	մ³	0.3200	43.1776	13.8168
21	133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.0102	73.4145	0.7477
22	133x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	0.8000	5.0404	4.0323
23	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	1.0000	11.3631	11.3631
24	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	6.8000	3.8130	25.9284

25	32x3մմ մետաղական խողովակի արժեքը	զմ	1.0000	0.8753	0.8753
26	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	0.0679	27.9350	1.8970
27	Լուսատու լուսադիոդային 1x85վտ	հատ	1.0000	22.4046	22.4046
28	ԱԲԲԳ 4x16մմ2 մալուխի անցկացում օդով ճոպանով	զմ	30.0000	1.0122	30.3660
29	ԱԲԲԳ 2x2.5մմ2 մալուխի անցկացում	զմ	5.0000	0.1902	0.9510
30	Ճոպանի արժեքը	զմ	30.0000	0.2435	7.3050
31	Մեկուսիչ ՏՖ-20	հատ	1.0000	0.5030	0.5030
32	Մեկուսիչ՝Ընկույզ՝	հատ	1.0000	0.7020	0.7020
	Ընդամենը				940.00000

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Իսակովի պող.հ.30 շենքից դեպի Իսակովի պող.հ32 շենք տանող անցուղու աստիճանների վերակառուցման

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների անվանումը	Չափի միա-վորը	Քանակը	Արժեքը, հազ. դրամ	
					միավ.	ընդամ.
1	2	3	4	5		
		1. Քանդման և վերակառուցման աշխատանքներ				
1	1-197	Լիցքային գրունտի մաքրում ձեռքով աստիճանավանդակից և կողեզրերից՝ կողալիցքով	մ³	6.300	3.4756	21.8963
2	.9-8 K=0,5	Ø50մմ տրամագծի գոյություն ունեցող մետաղական բազրիքի ապամոնտաժում	մ²	3.500	0.5541	1.9392
3	23-161	Բետոնե աստիճանների և եզրաքարերի քանդում	մ³	2.900	10.1957	29.5675
4	.6-177	Աստիճանների և հարթակների բետոնե շերտի տեղադրում B20 դասի բետոնից	մ³	3.200	61.0696	195.4226
5	8--59	Ամրանների տեղադրում՝3Bp դասի	կգ	33.500	0.5252	17.5925

6	.13-143	Բազալտե սալերի տեղադրում աստիճանավանդակներում և հարթակներում՝ δ=20մմ	մ²	26.500	12.5250	331.9136 0.0000
7	27-86-1	Բետոնե եզրաքարերի պատրաստում B12.5 դասի բետոնով	մ	3.000	5.2922	15.8766
8	.15-299	Աստիճանների կողապատերի ց/ավազե երեսասվաղ	մ²	28.000	3.2189	90.1303
9	.9-47	Մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում ուղղանկյուն կտրվածքի խողովակներից՝ էլ.եռակցումով՝50x30x4մմ-30x20x2մմ	կգ	156.500	1.1905	186.3179
10	.15-614	Մետաղական բազրիքի երկշերտ յուղաներկում	մ²	15.700	0.9143	14.3551
11	Ռ23-229	Շինաղբի ձեռքով բարձում ա/ինքնաթափի վրա	տ	12.600	0.6104	7.6904
12	Գն.3 էջ 50	Շինաղբի տեղափոխում 13կմ հեռավորության վրա	տ	12.600	2.1665	27.2974
		Ընդամենը				940.000

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, ՐԱՖՖՈՒ ՓՈՂ. Հ. 69 ՇԵՆՔԻՑ ԴԵՊԻ ՐԱՖՖՈՒ ՓՈՂ. Հ. 73 ՇԵՆՔ ՏԱՆՈՂ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5		
		Շինարարական աշխատանքներ				
		Քանդման աշխատանքներ				
1	E46-131	Բազալտե աստիճանահատերի ապամոնտաժում	գմ	21.00000	0.93782	19.69422
2	E46-99	Աստիճանների բետոնե նախաշերտի քանդում	մ³	0.52000	12.53295	6.51713
3	E1-961	III կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	0.42000	1.62714	0.68340
4	E46-99	Բետոնե գլխադիրների քանդում	մ³	0.15000	12.53295	1.87994

5	E46-132 կիր.	Վնասված բազալտե քուրքատաշ քարերի զգուշությամբ հանում, հետագա վերատեղադրմամբ	մ^2	4.70000	3.00281	14.11321
6	E46-99	Քարերի ետնամասի բետոնի քանդում	մ^3	0.56000	12.53295	7.01845
7	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով	մ^3	6.30000	3.05045	19.21784
8	C310-13 տ.մ.կ. 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում եւ տեղափոխում 13կմ	տ	0.92000	2.67607	2.46198
		<u>Կառուցողական աշխատանքներ</u>				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում	մ^3	0.74000	6.80365	5.03470
2	E6-1	Նախապատրաստական շերտի իրականացում B12.5 դասի բետոնից	մ^3			
3	E7-734 կիր.	Բազալտե աստիճանահատերի վերատեղադրում	գմ	16.80000	1.38525	23.27220
4	E7-734	Նոր բազալտե աստիճանների տեղադրում /ապամոնտաժվածի լրացում/	գմ	4.20000	6.93936	29.14531
5	E8-501	Շարվածքի իրականացում նախկինում ապամոնտաժված բազալտե քուրքատաշ քարերից	մ^2	4.70000	6.21617	29.21600
6	E6-90	Ետնամասի բետոնացում B15 դասի բետոնով	մ^3	0.34000	37.84804	12.86833
7	E8-501	Շարվածքի իրականացում նոր բազալտե քուրքատաշ քարերից	մ^2	2.30000	15.07086	34.66298
8	E11-55 E11-56 q=2	Բետոնե գլխադիրների սվաղում g/ա սվաղով	մ^2	4.20000	2.42617	10.18991
9	E15-70	Բազալտե գլխադիրի տեղադրում h=100մմ	մ^2	1.59000	31.47664	50.04786
10	P23-48	Անցքերի շաղափում բազրիքների ներդիր տարրերի տեղադրման համար	հատ	4.00000	0.39979	1.59916
11	E6-83	Ներդիր տարրերի տեղադրում	տ	0.00400	445.61491	1.78246
12	գ/հաշվարկ "Վերականգնում"	Պոլիմերցեմենտահին լուծույթի ներարկում շաղափած անցքերում	կգ	1.12000	2.17141	2.43198
13	E9-209	Մետաղական բազրիքների հավաքակցում	տ	0.03023	116.23390	3.51375
14	շուկա	Մետ. կլոր խողովակ Φ57x2.5	կգ	25.53000	0.38288	9.77493
15	շուկա	Մետ. կլոր խողովակ Φ32x2.5	կգ	4.70000	0.38473	1.80823
16	E15-614	Մետաղական բազրիքի երկշերտ յուղաներկում	մ^2	2.10000	0.85201	1.78922
17	E27-42 E27-42-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստ.	մ^3	0.44100	0.63290	0.27911

18	E-27-171	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստ.	մ^2	6.30000	2.42058	15.24965
19	E15-521 կիր.	Պատերի ներկում ճակատային ներկով	մ^2	10.70000	0.53720	5.74804
		Ընդամենը				310.000000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052470508
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(Ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ
Ք. Սևան, Նալբանդյան 44ա 5
«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 2474602726090000
ՀՎՀՀ 08622172

Զ. Մուրադյան ----------
(Ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<< 10> հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բակերի բարեկարգման » **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 95 մանկապարտեզից դեպի Բաբաջանյան փ. հ.39 շենք տանող անցուղու աստիճանների վերակառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	09.08.2019
2	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 93 մանկապարտեզի արտաքին մուտքային հանհանգույցի վերակառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	09.08.2019
3	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսակովի պող. հ. 30 շենքից դեպի Իսակովի պող. հ. 32 շենք տանող անցուղու աստիճանների վերակառուցման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	12.07.2019
4	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի հ. 69 շենքից դեպի Ռաֆֆու փողոց հ. 73 շենք տանող անցուղու աստիճանների վերակառուցում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	12.07.2019
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052470508
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(Ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<ՋԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ
Ք. Սևան, Նալբանդյան 44ա 5
«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 24746027260900000
ՀՎՀՀ 08622172

Զ. Մուրադյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
<<10 > հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
	45611300		հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1		Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 95 մանկապարտեզից դեպի Բաբաջանյան փ. հ.39 շենք տանող անցուղու աստիճանների վերակառուցման աշխատանքներ	1 523 376	1 899 000	1 899 000	1 899 000	1 899 000	1 899 000	1 899 000	1 899 000
2		Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ. 93 մանկապարտեզի արտաքին մուտքային հանհանգույցի վերակառուցման աշխատանքներ	747 473	940 000	940 000	940 000	940 000	940 000	940 000	940 000
3		Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Իսակովի պող. հ. 30 շենքից դեպի Իսակովի պող. հ. 32 շենք տանող անցուղու աստիճանների վերակառուցման աշխատանքներ	804 200	940 000	940 000	940 000	940 000	940 000	940 000	940 000

4		Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի հ. 69 շենքից դեպի Ռաֆֆու փողոց հ. 73 շենք տանող անցուղու աստիճանների վերակառուցում	254 075	310 000	310 000	310 000	310 000	310 000	310 000	310 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052470508
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
<<ՀԻ ԷՆԴ ՀԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ
Ք. Սևան, Նալբանդյան 44ա 5
«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 2474602726090000
ՀՎՀՀ 08622172

Հ. Մուրադյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
<<10 > հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41>> *գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<<10> հունիսի 2019 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41>>** *գնման պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«10» հունիսի 2019 թ.**

1.1 <<ՀԻ ԷՆԴ ՀԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ , ի դեմս Ընկերության տնօրեն Հ. Մուրադյան նույ. Քարտ 011140126, 001-ի կողմից տրվել է 11.04.2019թ, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.2 Ընկերությունը մասնակցում է _____ Երևանի քաղաքապետարան* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը

կազմակերպված՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41_____* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.3 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.4 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.5 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.6 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.7 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.8 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.9 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև /25/09/2020 ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու
<<ՀԻ ԷՆԴ ՀԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ
Ք. Սևան, Նալբանդյան 44ա 5
«Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 24746027260900000
ՀՎՀՀ 08622172

Հ. Մուրադյան _____
(ստորագրություն)

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ <<ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ>> ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Աղասյան մ/6

6. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 2474602726090000

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 08622172

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ Երևանի քաղաքապետարան

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900015211429

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **408900/չորս հարյուր ութ հազար ինը հարյուր/**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ ADM

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/41

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ Զ. Մուրադյան /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*